

կանութիւնը ձգտում է ձիսակատարութեան մէջ ունդարերէն լեզուն մացնել։ 280 եկեղեցիներում պատարագը ունդարերէն լեզուով է կատարում։ 1906 թ. գեկտ. 18-ին մի կոնդակ է հրատարակուած, որով թոյլ է տրուում ձիսակատարութեան մէջ հին ոյաւոներէնը զործադրել մասնաւոր գէպքերում միայն։ իսկ նոր ոլաւոներէնի գործադրութիւնը բոլորովին արգելուած է։

Սլաւոնական՝ մասսամբ էլ գերմանական կաթոլիկ կղերականների ծրագրի մի կէտն էլ կուսակրօնութնան վերացումն է (քահանաների վերաբերութեամբ), որ վերջնականապէս հառատառուած էր Աւնդարիայում 1848 թուից։ Վերջին ամուսնացած հոգեորականը մի քանի տարի առաջ Պրեսբիտրգում մեռաւ։

Աւոտրիական եկեղեցու կաթոլիկ եպիսկոպոսարանը 1906 թ. գեկտ. 11-ին լատիներէն լեզուով մի ընդհանրական հոգուական թուղթ է ուղղել կղերականութեանը, որով նա զգուշացնում էր «քարենորդութիւնից» (Reformismus) կամ «նորածեռութիւն»-ից (Modernismus), որոնք ինչպէս թոյն և վատ սերմեր վարակել են կղերականներից շատերին։ Նորասէրները սւզում են, որ եկեղեց ցին իւր գոգմաները նու միելիստիայական աշխարհայեցներին համաձայնեցնէ, եկեղեցու կաղմութիւնը դիմոկրատիան միաց ձեւ մոցնէ։ Միենոյն ժամանակ կուիւ է մղում կուսակրօնութեան և եկեղեցական այլ կարգերի գէմ և սուը քննադատութեան ենթարկում եպիսկոպոսների կարգադրութիւններն ու գրութիւնները։ Ամենից ցաւողին համարում է այն, որ իրենք քառանանաներն էլ լրագիրներ և ամուսնութերթեր են հրատարակուում, որով ըմբոստ հոգի են զարթեցնում։ Հեղինակութեան դէմ և անմիտ նորութիւններ տարածում։ Այսպահանջման մասին մասնաւոր արգու և ուղի մէ մահմարա

### ԲՈՂՈՔԸԿԵՐՆ ԵԿԵՂԵՑԻ

Աւտրո—Ավստրիա։ Ավենայի բողոքական եկեղեցու գլխաւոր խօսքի պաշաօնական ծանուցման համաձայն՝ 1906 թուին 4364 հոգի են մտել աւետարանական եկեղեցու գիրկը։ զացանից 3813 հոգի աւ գործուրդեան աւետարանական եկեղեցու գիրկն են մտել, իսկ մնացած 551 հոգին չելու ետական բողոքական եկեղեցու գիրկը։ ճշգրիտ վիճակագրական տեղեկութիւնները այս թուերն են տալիս։

Աւգուստուրգեան աւետարանական եկեղեցու գիրկն Են մտել 1393 տղամարդ, 1424 կին, 614 երեխայ։ իսկ Հելուետական (Զուի-

ցերական) եկեղեցու գիրկը 124 տղամարդ՝ 233 կեն, 45 երեխայ, առաջնի մէջ են մտել ընդ ամեն 1587, իսկ երկրորդին 1659 հոգի, կաթոլիկ եկեղեցուց առաջնի մէջ մտել են 3431 հոգի, իսկ երկրորդին 474, ընդ ամենը 3905 հոգի: Մասցած 459 հոգուց կէօք հրէաներից են եղել, միւս կէօք կաթոլիկ եկեղեցուց անուղղակի դարձած: Բոլորովին պաշտօնական ճիշտ տեղեկութիւնների համաձայն զաւանափոխութիւնը 1898-ից մինչև 1906 թիւը հետևեալ կերպով է կատարուել: Աւեաբանական եկեղեցու գերեն են մտել: 1898 թ.՝ 1598 հոգի, 99-ին՝ 6335 հ. 900-ին 5058 հոգի, 901-ին 6635 հոգի, 902-ին 4624, 903-ին 4510 հ. 905-ին՝ 4362, 905-ին 4855, 906-ին 4234 հ. ընդ ամեն՝ 42,395 հոգի: Բողոքականութիւնից կաթոլիկութեան են դարձել 1898-ից մինչև 906 թիւը տարեց տարի հետևեալ չափով՝ 99-ին՝ 765 հոգի, 900-ին՝ 813, 901-ին՝ 914, 902-ին՝ 108, 906-ին՝ 1031, 904-ին՝ 1137, 905-ին՝ 120 հ., 9-06-ին՝ 1297 հոգի:

#### ԳԵՐՄԱՆԻԱ.

Եկեղեցական — ընկերական (սոցիալական) գարծունէութիւնը. „Ev. Kirchlich. Anzr.” 14 տուած տեղեկութեան համաձայն՝ Եւալինում պաստոր Վ. Ա. Պ. Պֆայֆերը 1500<sup>ա</sup> ապօրինի, մեծ մասամբ Charité-ների մէջ ծնուած երեխաների գըլխուոր հոգացողութիւնը իւր վրայ է վերցրել: և որովհետեւ մենակ ինքը մի քանի վարձու մարդկանցով անկարող է անչափահան որբերի վերակացութիւնը անել, ուստի գիմել է եկեղեցական — ընկերական խմբերին, որ նորա իրենց անդամների և ուրիշ քրիստոնեալ կանանց միջոցով այս ոիբոյ գործին օգնութիւն ցոյց տան: Եկեղեցական — ընկերական խումբը այդ քանի համար խնդիրքով զիմել է քրիստոնեայ կանանց, որ պաստոր Պֆայֆին աջակցութիւն ցոյց տան: Փոքրիկ երեխաների խնամատարութիւնը, որ յանձնուած է քրիստոնեայ ընտանիքների, 14 օրից մինչ 4 շաբաթ, հոկտոբերի ամսի ենթարկուի: Պատահած անախորժ գէպերի մասին պէտք է պաստոր Պֆայֆին ժամուցուի: «Սա մի պաշտօն է, որից քրիստոնեայ կանայք չպիտի խուսափեն, սակայն այդ քանի համար հրէայ կանայք աւելի առաջ են ընկնում: այս աշխատանքի հետ ծախօներ կապուած չեն և ոչ էլ անդամակցական վճար»:

Լայպցիկ քաղաքը իւր այդ տեսակի գործունէութեան մէջ աւելի առաջ է անցել: այստեղ „der Alte Glaube” 28 տուած տեղեկութեան համաձայն, գործը և մանուկների հոգատարութիւնը կրթական տեսակէտով է առաջ տարւում: նա այդ սոս-

ծի համար ունի մի առանձին պաշտօնական մարմին, որի գլուխը կանգնած է փոքրուած, երեխաների բժիշկ Տառերէն։ Նրան օգնում են երկու կրտսեր բժիշկներ, 44 վերակացու տիկիններ, և անհրաժեշտ թուով օգնական պաշտօնեաներ։

Լայպցիգի այս կազմակերպութիւնը, որ մինչեւ այժմ իւր տեսակի մէջ միակն է եղել, օրէցօր աւելի ուշագրութիւն է դրաւում և բարի նախանձ շարժում։ Դրեզդենն ու Հալլէն արգէն որոշել են նորա օրինակին հետևելու։

### ԱՆԳԼԻԱ.

Անգլիական պարբամենատում փետրուարի 27-ին խօսք եղաւ եկեղեցու պետութիւնից բաժանելու մասին և հետևեալ առաջարկութիւնը ընդունուեցաւ 198 ձայնով ընդդէմ 90-ի։ «Եկեղեցու և ժողովրդի բարիքի համար ցանկալի է, որ Անգլիայում և Վալեսում եկեղեցին պետութիւնից բաժանուի»։ „Allē!“ 18+ այն կարծիքն ունի, թէ եկեղեցու և պետութեան միութեան ժամանակ՝ պետութիւնը եկեղեցուն անընդունակ է գարձնում իւր հոգեսոր գործունէութեան առաջարիզում, պետութիւնը նրան աշխարհականացնում է։ այժմ պետական եկեղեցին աղնուական և քաղաքական մի հիմնարկութիւն է գարձել։ Այդքան ամենամեծ ասգելքն է հանդիսանում ժողովրդի և եկեղեցու սերտութեան։ Եկեղեցու ապապետականացումը (Entstaatlichung) եկեղեցուն յետ կը տայ իւր ազատութիւնը և նա հնարաւորութիւն կունենայ իւր պաշտօնը աւելի լաւ կատարելու։ Պետութեան գործը չէ իւր հպատակների կրօնական համոզմունքներին և կարծիքներին ընթացք տալ. Կրօնական տարբեր համոզմունքների և կարծիքների համար ոչ ոք պետութիւնից օգուտ կամ լինաս չպիտի կրէ։ այդ աեսակէտով ցոյց տուածանհասար վերաբերմունքը միշտ լինասակար հետեւանքներ է ունեցել։ Թէ այժմ կառավարութիւնը դէպի այդ խնդիրը նույն գիրք է ըստնել, կարելի է տեսնել մինիստր Քիրքելի հետեւալ խօսքերից։ «Պետական եկեղեցին այն ժամանակ իրաւացի կլինէր, երբ միենոյն պետութեան բոլոր հպատակները կրօնական նման համոզմունք ունենային, երբ պետութիւնն ու եկեղեցին միենոյն նշանակութիւն ունենացին, սակայն այդպիսի մի դրութիւն անհասանելի է։ Զի կարելի նոյնպէս, որ ազգաքնակութեան մեծամասնութիւնը, ինչպէս արել են մեր պապերը, փոքրամասնութեան ուժով իրենց գաւանանքին բերէ և հակառակողներին տանջէ։ Եւ անշուշտ չկայ մէկը, որ այդ բանը ցանկանար, ուստի և չեմ կարող հասկանալ։ Թէ ինչպէս հնարաւոր է պետական

եկեղեցու յարատեռութիւնը իրաւացի համարել։ Պետական եկեղեցիների և ազատ եկեղեցու մէջ եղած՝ անդունքը շարունակ մեծանում է։ Եթէ ուղում են պետական եկեղեցին պահել միմիայն նրա համար, որպէս զի եկեղեցական ոչ մի մեծ համայնքի չպատկանող անձնութ, կարեթը պահանջած դէպքում իրենց եկեղեցին ունենան, այդ բանը պատիւ չի բերի այդպէս վարուողներին։

Նատերն են համոգուած, որ պետական եկեղեցին՝ պետութեան համար ոչ մի օգուտ չի բերում. հարցնում եմ, կարո՞ղ է մէկը մի օրինակ բերել, որ եկեղեցու և պետութեան միութիւնը պետութեան փարձանքի ժամերին որեիցէ օգուտ բերած լինի նրան։

Բացի այդ ես համոգուած եմ, որ պետութիւնը եկեղեցուն միայն բարոյական վնաս է հասցըել։ Համոգուած եմ նաև, որ այն ժամանակ, երբ եկեղեցին այլ ևս պետութեան ճնշմանը չի ենթարկուի, կըկին անդամ դարեր շարունակ ընդունակ կը լինի ժողովրդին հոգեկան բարեք բաշխելու։

## Ա.ՄԵՐԻԿԱ.

Եկեղեցին եւ Ընկերական (սոցիալական) հարցը. Միացեալ նահանգների երիցական եկեղեցու գլխաւոր համագումարը „Review de Christianisme social“-ի տուած տեղեկութեան համաձայն, հետևեալ բանաձեռն է ընդունել. — «Ենկատի ունենալով բանւորական հարցի աճող ժանրակշիռնշանակութիւնը, և գիտակցելով, որ նա էապէս մի բարոյական և կրօնական հարց է, և որ այս ասոլարիզում միայն կարող է լուծումն ստանալ. — յանձնարարում ենք ներքին միսիոնարութեան կոմիտէներին գործը աջող կերպով առաջ տանելու համար, մասնաւոր խմբեր կազմել իրենց ենթակայ գուառներում ընկերական հարցը սիստեմատիկ կերպով ուսումնասիրելու։ Դոքա պէտք է գործին լաւ տեղեկանալուց յետոյ՝ եկեղեցուն աշխատաւորների կազմակերպական ձգտումների հետ պիտի ծանօթացնեն և բանւորների մէջ եկեղեցու ընկերական գործունէութեան մասին գիտակցութիւն առաջ ըերեն։»

Այս յանձնախմբերը պիտի նպաստեն նաև, որ եկեղեցու և բանւորների միութիւնների մէջ ոերտ յարաբերութեան կապ հաստատեն. Նոքա պէտք է այնպիսի զրուածքներ հրատարակեն և տարածեն, որոնք կօգնեն եկեղեցու անդամների և բանւորների լուսաւորութեան։ Նոքա պէտք է աշխատեն ուժեղացնել գոյութիւն ունեցող այն ձեռնարկութիւնները, որոնք նպաստում են որտաղին յարաբերութիւն յառաջ բերել եկեղեցու և բանւորների մէջ։